

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2021

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

### Հարգելի դիմորդ

Խորիուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՞ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ձիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

**1** Որո՞նք չեն մտնում բարձրակարգ բույսերի ենթաքաղաքորության մեջ.

- 1) ջրիմուռները
- 2) գետնամուշերը
- 3) մերկասերմերը
- 4) մամուռները

**2** Նշված ծածկույթներից ո՞րը կազմված չէ եղջերային նյութից.

- 1) ոսկրային ձկան թեփուկը
- 2) կատվի մազը
- 3) մողեսի թեփուկը
- 4) աղավնու փետուրը

**3** Մողեսների ողնաշարի ո՞ր ողերն են կրում կողեր.

- 1) կրծքային, գոտլկային և սրբանային բաժինների ողերը
- 2) պարանոցային և կրծքային բաժինների ողերը
- 3) միայն կրծքային բաժնի ողերը
- 4) կրծքային և գոտլկային բաժինների ողերը

**4** Բույսերի ո՞ր դասին է պատկանում եզան լեզուն և ինչպիսի՞ն է արմատային համակարգը.

- 1) միաշաքիլավորների, արմատային համակարգը առանցքային է
- 2) երկշաքիլավորների, արմատային համակարգը առանցքային է
- 3) միաշաքիլավորների, արմատային համակարգը փնջածն է
- 4) երկշաքիլավորների, արմատային համակարգը փնջածն է

**5** Հետևյալ կենդանիներից ո՞րը չի պատկանում աղեխորշավորների տիպին.

- 1) մեղուզան
- 2) օքելիան
- 3) ակտինիան
- 4) բողոք

**6** Ո՞ր դասին է պատկանում սպիտակ պլանարիան.

- 1) ծծող որդերի
- 2) ժապավենաձև որդերի
- 3) բազմախողան որդերի
- 4) թարթիչավոր որդերի

**7 Ի՞նչ է շնչառական ծավալը.**

- 1) օդի ծավալը, որը մնում է թոքերում ամենախորը ներշնչումից հետո
- 2) հանգիստ ներշնչումից հետո հանգիստ արտաշնչած օդի ծավալը
- 3) օդի առավելագույն քանակը, որը կարելի է արտաշնչել ամենախորը ներշնչումից հետո
- 4) օդի ծավալը, որը մնում է թոքերում ամենախորը արտաշնչումից հետո

**8 Ինչպե՞ս է իրականացվում մարդու միզագոյացման հումորալ կարգավորումը.**

- 1) մակերիկամների միջուկային և կեղևային շերտերի հորմոնների միջոցով
- 2) վահանաձև գեղձի հորմոնների և կալցիումի իոնների միջոցով
- 3) մակերիկամի միջուկային շերտի և մակուլեղի հորմոնների միջոցով
- 4) մակուլեղի և մակերիկամի կեղևային շերտի հորմոնների միջոցով

**9 Նշված բնութագրերից ո՞րն է ճիշտ առողջ մարդու սրտի համար.**

- 1) փեղկավոր փականների եզրերից շարակցահյուսվածքային թելեր են ձգվում դեպի փորոքների պատերը
- 2) աջ և ձախ փորոքների պատերը հավասարապես հաստ են
- 3) ձախ նախասրտի և ձախ փորոքի միջև գտնվում է եռափեղկ փականը
- 4) ուսի միջնապատ, որով հաղորդակցվում են աջ և ձախ նախասրտերը

**10 Նշվածներից ո՞ր կառուցվածքային տարրերն են գտնվում մարդու ներքին ականջում.**

- 1) լսողական ոսկրիկները և մազանման բջիջները
- 2) լսողական արտաքին անցուղին, մազակազմ բջիջները և գալարուն խողովակները
- 3) հիմային թաղանթը, մազանման զգացող բջիջները
- 4) կլոր և ձվաձև պարկիկները, լսողական փողը և թմբկաթաղանթը

**11 Մարդու զլխուղեղի ո՞ր բաժնում են գտնվում ջերմակարգավորման, քաղցի և ծարավի զգացողության կենտրոնները.**

- 1) երկարավուն ուղեղում
- 2) ենթատեսաթմբում
- 3) միջին ուղեղում
- 4) տեսաթմբում

**12 Ո՞ր պնդումն է սխալ մարդու արյան վերաբերյալ.**

- 1) ազլյուտինինները և ազլյուտինոգենները պայմանավորում են արյան 4 խմբերը
- 2) երիթրոցիտների մակերեսին գտնվում են A և B ազլյուտինոգեններ
- 3) երիթրոցիտների մակերեսին գտնվում են α և β ազլյուտինիններ
- 4) պլազմայում գտնվում են α և β ազլյուտինիններ

13

Ի՞նչ հիվանդություն է առաջանում մարդու օրգանիզմում C վիտամինի թերևիտամինոզի կամ ավիտամինոզի դեպքում.

- 1) հավկուրություն
- 2) ցինգա
- 3) բերի-բերի
- 4) ռախիտ

14

Ինչի՞ է հանգեցնում մարդու օրգանիզմում քրտնարտադրության ուժեղացումը և մաշկի արյան անոքների լայնացումը.

- 1) արյան ճնշման բարձրացմանը
- 2) ջերմաստվության փոքրացմանը
- 3) մարմնի ջերմաստիճանի բարձրացմանը
- 4) օրգանիզմի պաշտպանմանը գերտաքացումից

15

Մարդու n<sup>o</sup>ր հիվանդությունն է վահանագեղձի գործառույթի խանգարման արդյունք.

- 1) բրոնզախտ
- 2) թոքուկություն
- 3) լորձայտուց
- 4) հսկայություն

16

Ինչո՞ւ է գենետիկական կողը համարվում միանշանակ և ունիվերսալ քանի որ՝

- 1) միևնույն ամինաթթուն կարող է գաղտնագրվել մեկից ավելի եռյակներով
- 2) գեների միջև կան «ընդհատումներ»
- 3) բոլոր օրգանիզմներում նույն եռյակները պայմանավորում են նույն ամինաթթուն
- 4) յուրաքանչյուր նույն կարող է լինել միայն մեկ որոշակի եռյակի կազմում

17

Ի-ՈՆԹ-ի մոլեկուլում n<sup>o</sup>ր եռյակին է համապատասխանում ԴՆԹ-ի մոլեկուլի ԱԱԹ եռյակը.

- 1) ԱՈՒՈՒ
- 2) ԹԹՍ
- 3) ՈՒՈՒՍ
- 4) ՈՒՈՒԹ

18

Նշված օրգանիզմներից որո՞նք քաղանթային կառուցվածք չունեն.

- 1) լիզոսոմներն ու վակուոլները
- 2) ոիբոսոմներն ու բջջային կենտրոնը
- 3) բջջային կենտրոնն ու միտոքրոնումները
- 4) Գոլցիի ապարատն ու քլորոպլաստները

**19**

**Բջջում ո՞ր օրգանիզմն է իրականացնում լիալիդների սինթեզը.**

- 1) հատիկավոր էնդոպլազմային ցանցը
- 2) ռիբոսումը
- 3) հարք էնդոպլազմային ցանցը
- 4) բջջային կենտրոնը

**20**

**Ո՞ր կառուցվածքն է բացակայում բարձրակարգ բույսերի բջիջներում.**

- 1) բջջապատը
- 2) բջջային կենտրոնը
- 3) բջջակորիզը
- 4) Գոլջիի ապարատը

**21**

**Ցանկացած բջջում առկա են.**

- 1) պլաստիդները, միտոքոնդրիումները, ռիբոսումները
- 2) ցիտոպլազման, կորիզը, ռիբոսումները
- 3) լիզոսումները, բջջային կենտրոնները, ներառուկները
- 4) ցիտոպլազման, պլազմային թաղանթը, ռիբոսումները

**22**

**Թվարկվող սպիտակուցներից ո՞րն է կատարում պաշտպանական գործառույթը.**

- 1) ֆլագելինը
- 2) միոզինը
- 3) ակտինը
- 4) ինտերֆերոնը

**23**

**Կորիզավոր բջջի ո՞ր կառուցվածքներում է սինթեզվում ԱԵՖ-ը.**

- 1) միտոքոնդրիումներում
- 2) բջջակորիզում և լիզոսումներում
- 3) ռիբոսումներում
- 4) Գոլջիի ապարատում և բջջային կենտրոնում

**24**

**Ինչե՞րն են ձևավորվում մեզոդերմից.**

- 1) երիկամները և սեռական գեղձները
- 2) մազերը և խոհիկների էպիթելը
- 3) լյարդը և ատամների էմալը
- 4) լողափամփուշտը և բոքերի էպիթելը

**25**

**Ի՞նչն է հանդիսանում անսեռ բազմացման առավելություն սեռական բազմացման նկատմամբ.**

- 1) ծնողների սոմատիկ բջիջներում առաջացած մուտացիաները սերունդներին փոխանցելու հնարավորությունը
- 2) մուտացիաների ավելի մեծ քանակը
- 3) սերունդների գենետիկական բազմազանության բարձրացումը
- 4) ծնողների սեռական բջիջներում առաջացած մուտացիաները սերունդներին փոխանցելու հնարավորությունը

**26**

**Ինչպե՞ս է Գ. Սենդելը անվանել հիբրիդային առանձնյակներում ծնողական ձևերից մեկի հատկանիշի գերակշռման երևոյթը.**

- 1) ռեցեսիվություն
- 2) հետերոզիգոտություն
- 3) դոմինանտություն
- 4) հոմոզիգոտություն

**27**

**Հետադնային օպագացման ընթացքում ո՞ր կենդանիների մոտ չի ձևավորվում քրքուր.**

- 1) սարդերի
- 2) ծղրիդների
- 3) աճապոչ երկկենցաղների
- 4) բգեղների

**28**

**Ո՞ր կենդանիների օրգանիզմում է հանդիպում արական հետերոզամետություն.**

- 1) պոչավոր երկկենցաղների
- 2) թռչունների և թիթեռների
- 3) դրոզֆիլ պտղաճանճների և կաթնասունների
- 4) սողունների

**29**

**Երկիրիդի խաչասերումից հետո, ե՞րբ է ստացվում միակերպություն՝ ըստ ֆենոտիպի երկու ալելով էլ ոչ լրիվ դրոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.**

- 1) AABB x Aabb
- 2) AABB x AABb
- 3) aaBB x AAbb
- 4) AaBB x aabb

**30**

**Ի՞նչն է ընկած պոլիալինիայի երևոյթի հիմքում.**

- 1) քրոմոսոմների քանակի ոչ բազմապատիկ անգամ փոքրացումը
- 2) քրոմոսոմների հապլոիդ քանակի բազմապատիկ անգամ մեծացումը
- 3) քրոմոսոմների քանակի կրկնակի նվազումը
- 4) քրոմոսոմների քանակի ոչ բազմապատիկ անգամ մեծացումը

**31**

**Ի՞նչո՞վ է պայմանավորված ցիտոպլազմային ժառանգականությունը.**

- 1) ցիտոպլազմայում գտնվող ռիբոսոմների  $\Omega$ -ՆԹ-ի մոլեկուլներով
- 2) կորիզի քրոմոսոմների գեներով
- 3) միտոքրոնիումների կամ պլաստիդների գեներով
- 4) ցիտոպլազմա ներթափանցած վիրուսների գեներով

**32**

**Նշվածներից ո՞րն է մարդու օրգանիզմում ռուդիմենտ.**

- 1) մատների արանքում թաղանքների առկայությունը
- 2) պոչը
- 3) ականջային մկանները
- 4) դեմքի և մարմնի խիտ մազային ծածկույթը

**33**

**Ո՞ր քննութագիրն է համապատասխանում կոմենսալիզմին.**

- 1) փոխազդող տեսակներից ոչ մեկը օգուտ չի ստանում
- 2) փոխհարաբերվող երկու տեսակն էլ ստանում են օգուտ և հանդիսանում է դրանց գոյության համար անհրաժեշտ պայման
- 3) փոխազդող երկու տեսակներից միայն մեկն է օգուտ ստանում
- 4) փոխհարաբերվող երկու տեսակներն են ստանում օգուտ, սակայն դրանց համատեղ գոյությունը յուրաքանչյուր տեսակի համար անհրաժեշտ պայման չէ

**34**

**Ի՞նչն է ընկած տեսակի կենսաքիմիական չափանիշի հիմքում.**

- 1) քրոմոսոմների թիվը
- 2) առանձնյակների ներքին և արտաքին կառուցվածքի նմանությունները
- 3) տեսակի զբաղեցրած արեալը
- 4) սպիտակուցների և նուկլեինաքրուների կառուցվածքն ու կազմը

**35**

**Նշվածներից ո՞րը կոնվերգենցիայի օրինակ չէ.**

- 1) կետանմանների և թիառոտների վերջույթների նմանությունը
- 2) խլորդի և իշախառանչ արջուկի վերջույթների նմանությունը
- 3) կոլիքրիի և իլիկարիթեռի բերանային ապարատների նմանությունը
- 4) դելֆինների և շնաձկների մարմնի շրջհոսելի ձևը

**36**

**Նշվածներից ո՞րն է կայունացնող ընտրության ազդեցության արդյունք.**

- 1) բույսերի ծաղիկների մասերի խիստ հարմարվածությունը փոշոտող միջատների չափերին
- 2) թունաքիմիկատների նկատմամբ կենդանիների կայունության առաջացումը
- 3) ձիու էվոլյուցիան՝ հնգամատ վերջույթից մինչև միամատը
- 4) կղզիներում ապրող միջատների անթև ձևերի առաջացումը

- (37-38) Սննման շղթան կազմված է հետևյալ օդակներից՝ ֆիտոպլանկտոն-զոռոպլանկտոն-մանր ձուկ-խոշոր ձուկ-փող։ Կենդանու զանգված է անցնում կերած սննդի զանգվածի 10 %-ը, և ընդունենք, որ յուրաքանչյուր սննման մակարդակ օգտագործում է միայն նախորդ սննման մակարդակի ներկայացուցիչներին։

37

Քանի<sup>o</sup> կգ սկզբնական կենսազանգված է անհրաժեշտ խոշոր ձկան զանգվածը 2 կգ-ով ավելանալու համար։

- 1) 22220
- 2) 200
- 3) 200000
- 4) 2000

38

Ամբողջ շղթայում քանի<sup>o</sup> կգ է կազմում զանգվածի ընդհանուր կորուստը փոկի զանգվածը 4 կգ-ով ավելանալու համար։

- 1) 4000
- 2) 2000
- 3) 19998
- 4) 39996

**39**

Երկրորդային մեզի 2%-ը կազմում է միզանյոթը: 1,5 լիտր երկրորդային մեզի հետ միասին (խտությունը 1,05 գ /սմ<sup>3</sup>) քանի՞ զրամ միզանյոթ է հեռանում օրգանիզմից:

- 1) 28,6
- 2) 2,86
- 3) 3,15
- 4) 31,5

**40**

Ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու մարմնից գոլորշիացավ 0,5 կգ քրտինք: 1 զրամ քրտինքի գոլորշացման համար ծախսվում է 2,45 կԶ էներգիա: Մոտավորապես քանի՞ Զոռու էներգիա հեռացավ մաշկի 1 սմ<sup>2</sup> մակերևույթից.

- 1) 440-587
- 2) 25-33
- 3) 61-82
- 4) 272-363

**41**

Ո՞ր հիվանդությունը (նշված է ձախ սյունակում) ո՞ր օրգանիզմների (նշված է աջ սյունակում) կողմից է հարուցվում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

**Հիվանդություն**

- A. ԶԻԱՀ
- B. ծաղիկ
- C. բռքախտ
- D. խոլերա
- E. սիֆիլիս
- F. պոլիոմիելիտ
- G. խոզուկ
- H. դիֆթերիա

**Օրգանիզմներ**

- 1. բակտերիաներ
- 2. վիրուսներ

**42**

Ո՞ր առանձնահատկությունը (նշված է ձախ սյունակում) ո՞ր գործընթացին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

**Առանձնահատկություն**

- A. մատրիցայի դերում հանդես է գալիս Դ-ՆԹ-ի մոլեկուլը
- B. ռիբոսոմը փոխագրում է ի-Ո-ՆԹ-ի հետ
- C. տեղի է ունենում ռիբոսոմում
- D. մատրիցայի դերում հանդես է գալիս ի-Ո-ՆԹ-ի մոլեկուլը
- E. տեղի է ունենում կորիզում
- F. առաջանում են պոլիպեպտիդների մոլեկուլներ
- G. առաջանում են պոլինուկ্লեոտիդների մոլեկուլներ

**Գործընթաց**

- 1. տրանսկրիպցիա
- 2. տրանսլյացիա

**43**

Ինչպիսի՞ համապատասխանություն գոյություն ունի էվոլյուցիոն փոփոխությունների (նշված է ձախ սյունակում) և էվոլյուցիայի ուղիների (նշված է աջ սյունակում) միջև։ Նշել ճիշտ համապատասխանությունը։

**Էվոլյուցիոն փոփոխություն**

- A. զաղձ բույսի տերևների քացակայությունը
- B. տաքարյունության առաջացումը
- C. բույսերում սերմերի առաջացում
- D. քորդավորների քառախորշ սրտի առաջացումը
- E. ձիերի սմբակների առաջացումը
- F. հավերժական սառույցներում բակտերիաների կենսունակություն
- G. ժապավենաձև որդերի մարսողական համակարգի հետզարգացում
- H. բույսերի փոշոտումը քամու միջոցով

**Էվոլյուցիայի ուղիներ**

- 1. արոմորֆոզ
- 2. ընդհանուր դեգեներացիա
- 3. իդիոադապտացիա

**44**

Գտնել միջատների բերանային ապարատների տիպերի (նշված է աջ սյունակում) և թվարկվող հասուն միջատների (նշված է ձախ սյունակում) համապատասխանությունը։ Նշել համապատասխանություններն ըստ հերթականության։

**Հասուն միջատներ**

- A. մեղու
- B. փայտողիլ
- C. թիթեռ
- D. խավարասեր
- E. մնձակ
- F. ծղրիդ
- G. ճպուռ

**Բերանային ապարատի տիպեր**

- 1. կրծող
- 2. կրծող-ծծող
- 3. ծակող-ծծող
- 4. ծծող

**45**

Ո՞ր գործընթացը (նշված է ձախ սյունակում) շնչառության ո՞ր փուլին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության:

**Գործընթաց**

- A. միջկողային մկանների բուլացում
- B. կրծքավանդակի ծավալի մեծացում
- C. միջկողային մկանների կծկում
- D. ստոծանու բուլացում
- E. կողոսկրերի բարձրացում
- F. ստոծանու մկանների կծկում

**Շնչառության փուլ**

1. ներշնչում
2. արտաշնչում

**46**

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները՝ բակտերիաֆագով բակտերիայի վարակման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. պոչային ելունների ամրացում բջջաբաղանթին
2. բակտերիաֆագի սպիտակուցների սինթեզ
3. բջջաբաղանթի «լուծում»
4. նոր բակտերիաֆագերի ձևավորում
5. բակտերիաֆագի  $\Sigma$ ՆԹ-ի սինթեզ
6. բակտերիայի ռչնչացում
7. բակտերիաֆագի  $\Sigma$ ՆԹ-ի ներարկում բակտերիայի մեջ

**47**

Ինչպիսի՞ն է ֆոտոսինթեզի նշված գործընթացների հաջորդականությունը.

1. ջրի ֆոտոլիզ (քայքայում)
2. գրգռված էլեկտրոնի անցում փոխադրիչ մոլեկուլի վրա
3. քլորոֆիլի մոլեկուլի վերականգնում
4. ատոմային ջրածնի առաջացում
5. քլորոֆիլի մոլեկուլից էլեկտրոնի անջատում
6. քլորոֆիլի մոլեկուլի գրգռում
7. գլյուկոզի առաջացում

**48**

**Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում արյան մակարդման գործընթացները մարդու օրգանիզմում:** Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. արյունատար անոթի պատի վնասում
2. ֆիբրինոգենի քնափոխում
3. թրոմբոցիտների քայլայում
4. ֆիբրինի առաջացում
5. թրոմբոցիտների հպում արյունատար անոթի անհարթ մակերևույթին
6. արյան պլազմայի մեջ թրոմբինի արտազատում
7. թրոմբի առաջացում

**49**

**Ի՞նչ հաջորդականությամբ է անցնում գրգիռը քաղաքության պայմանական ռեֆլեքսի ռեֆլեքսային աղեղով:** Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. նյարդային ազդակի հաղորդում ժամանակավոր կապով
2. նյարդային ազդակի հաղորդում շարժողական նյարդով
3. մեծ կիսագնդերի կեղևի սննդառական կենտրոնի դրդում
4. քաղաքության հրահրում
5. տեսողական նյարդով նյարդային ազդակի անցում մեծ կիսագնդերի կեղևի տեսողական գոտի
6. աչքի ցանցաթաղանթի ընկալիչների գրգռում լույսով

**50**

**Նշել մարդու օրգանիզմում դեպի գլխուղեղի քջիցներ ճարպերի տեղափոխման հաջորդական ուղին՝ սկսած քարակ աղիներում ճարպերի քայլայման գործընթացից.**

1. ձախ նախասիրտ
2. թոքային երակ
3. գլիցերինի և ճարպաթթուների ներծծում
4. գլխուղեղի զարկերակներ
5. թավիկների էպիթելի քջիցներում օրգանիզմին բնորոշ ճարպերի սինթեզ
6. առտա
7. ստորին սիներակ
8. նեյրոններ
9. ավշային մազանոթներ

**51**

**Նշել գորտի օրգանիզմ օդի անցման և հեռացման միջև ընկած ժամանակահատվածում իրականացվող գործընթացների հաջորդականությունը.**

1. օդը թոքերից դուրս է զալիս մարմնի պատերի և ներքին օրգանների մկանների կծկման շնորհիվ
2. օդը քրանցքերով անցնում է բերանակլանային խոռոչ
3. օդը մղվում է դեպի թոքերը
4. բերանակլանային խոռոչում ստեղծվում է նոսրացած տարածություն
5. փակվում են քրանցքերի փականները
6. բերանակլանային խոռոչի հատակը բարձրանում է
7. բերանակլանային խոռոչի հատակն իջնում է

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. օղում ածխաթթու գազի պարունակության նվազումը ուժեղացնում է ֆոտոսինթեզի ինտենսիվությունը
2. Էկոլոգիսկան համակարգերում որպես ռեղուցենտրոն համես են գալիս սմկերը, բակտերիաները
3. կենդանի նյութի միջավայրագոյացնող ֆունկցիայի հետ է կապված կենդանի նյութի ազդեցությունը կլիմայի փոփոխության վրա
4. ազրոէկոհամակարգերն օժտված են ինքնակարգավորմամբ, դոմինանտ տեսակները բնական ընտրության արդյունք են
5. ֆոտոսինթեզի համար ածխածնի գլխավոր աղբյուրը մթնոլորտի ածխաթթու գազն է
6. ռուղիմենտները ձևավորում են սաղմնային զարգացման ընթացքում,
- հետագայում դադարում են զարգանալ և հասուն օրգանիզմներում չեն գործում
7. օմելան, ռաֆլեզիան, գաղձը գիշատիչ բույսեր են

## Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. բոքային բռքամզային թաղանքը պատում է կրծքավանդակի պատը ներսից և կազմված է էպիթելային հյուսվածքից
2. ակտիվ արհեստական իմունիտետն առաջանում է, եթե օրգանիզմ են մտցվում բուժիչ կամ իմունային շիժուկներ, որոնք պարունակում են պատրաստի հակամարմիններ
3. ավշում ապիտակուցների քանակը 3-4 անգամ ավելի շատ է, քան արյան պլազմայում
4. ֆիբրինոգենից զուրկ արյան պլազման կոչվում է շիճուկ
5. լուսընկալիչներից սրվակիկները ընկալում և տարբերակում են զույները վառ լուսավորության դեպքում
6. շնչափողի հետին պատը հպվում է կերակրափողին
7. թմրկաթաղանթի տատանումները լսողական ուկրիկների միջոցով անմիջապես հաղորդվում են կլոր պատուհանի թաղանթին և հարուցում են խխունջի հեղուկի տատանումներ

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. սողունների առջևի ուղեղի կիսագնդերի մակերեսին առկա են գորշ նյութի կուտակումներ
2. պտերները, մերկասերմերն ունեն ծաղիկներ, բազմանում են սերմերով
3. մողեսի միզածորանները բացվում են կոյանոցի մեջ
4. ծաղիկը, պտուղը, սերմը ծաղկավոր բույսերի գեներատիվ օրգաններն են
5. հողաբարձրիկ ինֆուզորիայի բջջաբերանին հաջորդում է բջջակլանը
6. ձկների սրտի մկանների կծկման շնորհիվ փորոքից արյունը մեջքային առտայով շարժվում է դեպի խոիկներ
7. անձրևորդը երկշերտ, ճառագայթային համաշափությամբ, բաց արյունատար համակարգով կենդանի է

**55**

## **Նշել բոլոր ճիշտ պնդումները.**

1. սայստակուցի մոլեկուլում մի ամինաթթվի կարբօքսիլ խմբի մնացորդի թթվածնի և մյուս ամինաթթվի ամինախմբի մնացորդի ջրածնի միջև առաջանում է կովալենտ պետտիդային կապ
2. խիտինը և մանանը կազմում են սնկերի բջջապատր
3. մեկ ոիքոսումի հետ միացած ի-ՈՒԹ-ի մոլեկուլները միասին առաջացնում են պոլիոիքոսում
4. նյութերի տեղափոխությունը բարձր խտությունից դեպի ցածրն, այսինքն ըստ գրադիենտի, կոչվում է պասիվ փոխադրում, և այն արտաքին էներգիայի ծախս չի պահանջում
5. ինտերֆերենցիա է կոչվում այն երևույթը, երբ բջջում մեկ վիրուսի առկայությունը հաճախ պաշտպանում է բջիջը մեկ այլ վիրուսի ներթափանցումից
6. բույսերի բջջապատր կազմված է արտաքին շերտից և դրա տակ գտնվող պլազմալեմից

**56**

## **Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.**

1. աջ նախասրտի և աջ փորոքի բացվածքի սահմանում գտնվում են երկփեղկ փականները
2. լյարդում լեղու արտադրությունն ակտիվանում է երկարավուն ուղեղից հաղորդվող նյարդային գրգիռների ազդեցության տակ
3. լյարդի դրներակով լյարդի մեջ է մտնում աղեստամոքսային ուղուց եկող գարկերակային արյունը
4. հաստ աղից ուղիղ աղի անցման տեղում գտնվում է կույր աղին
5. սիմպաթիկ նյարդային համակարգի ազդեցությամբ ուժեղանում է զրի հետադարձ ներծծումը
6. կաթնագեղձերը քրտնագեղձերի ածանցյալներ են
7. սիմպաթիկ նյարդային համակարգի ակտիվացումը խթանում է բքարտադրությունը

**57**

## **Նշել բոլոր սխալ պնդումները.**

1. բոչունների արյունը թթվածնով հարստանում է ներշնչման և արտաշնչման ընթացքում
2. սնկերը զուրկ են քլորոֆիլից, կատարում են ֆոտոսինթեզ, արտազատում են միզանյութ, կուտակում են գլյուկազոն
3. բոչունների ձախ փորոքից դուրս է գալիս առրտայի ձախ աղեղը
4. ընկերքավոր կաթնասունների բեղմնավորումը ներքին է, տեղի է ունենում ձվատարներում
5. բոչունների կրծքային բաժնի ողերը սերտածած են միմյանց, և դրանց միացած են կողերը
6. խմորասնկերը բազմաբջիջ են, ձվածեն, ցիտոպլազմայում պարունակում են պլաստիդներ, վակուոլներ
7. նախագազանները կենդանածին են, ունեն ընկերք, չունեն կոյանոց

**58**

## **Նշել բոլոր սխալ պնդումները.**

1. ցենտրիուների կրկնապատկումը բջջի կենսական ցիկլի ժամանակ տեղի է ունենում ինտերֆազի G<sub>2</sub>-փուլում
2. ԱԵՖ-ի մոլեկուլն ունի կայուն կառուցվածք, պահեստավորվում է մկանային բջիջներում
3. բողոքմամբ են բազմանում հիդրաները և բարձրակարգ բույսերը
4. կոճղարմատը, պալարը, սոխուկը ձևափոխված ընձյուղներ են
5. ցիտոզը բջջի բաժանման ձև է
6. տրոհման ընթացքում բլաստոմերներում Դ-ՆԹ և Ո-ՆԹ չի սինթեզվում, օգտագործվում է բլաստոմերների կորիզներում գտնվող գենետիկական տեղեկատվությունը
7. ոիրոսումի փոքր և մեծ մասերի միակցմանը մասնակցում են կալցիումի իոնները

**59**

## **Նշել բոլոր սխալ պնդումները.**

1. կրոսինգովերի հետևանքով տեղի է ունենում քրոմոսոմների թվի կրկնակի պակասում
2. հատկանիշի մոդիֆիկացիոն փոփոխականության սահմաններն անվանում են նրա ռեակցիայի նորմա
3. բեղմնավորման ժամանակ գամետների պատահական զուգակցման գործընթացն ընկած է համակցական փոփոխականության հիմքում
4. Դառնի սինդրոմը գենային մուտացիայի արդյունք է
5. հոմոզիգոտ դրմինանտ և հոմոզիգոտ ռեցեսիվ առանձնյակների միահիբրիդ խաչասերման արդյունքում ստացվում է 1:2:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
6. գերդոմինանտության դեպքում հոմոզիգոտ դրմինանտ գենոտիպի դեպքում դրմինանտ հատկանիշն ավելի ցայտուն է դրսուրվում, քան հետերոզիգոտ վիճակում
7. խաչասերումը կոչվում է վերլուծող, եթե անհայտ գենոտիպ ունեցող առանձնյակը խաչասերում են ռեցեսիվ գենով հոմոզիգոտ առանձնյակի հետ

**60**

**Ֆոտոսինթեզի պրոցեսում կլանվել է 176 կգ CO<sub>2</sub>: 1 մոլ զազր զբաղեցնում է 22,4 լիտր ծավալ: Զանի<sup>o</sup> լիտր քրվածին է արտադրվել այդ ընթացքում:**

- (61-63) Շագանակագույն աչքերով, արյան երկրորդ խմբով, ուղիղ մազերով տղամարդն ամուսնացավ երկնագույն աչքերով, արյան երրորդ խմբով, ալիքածև մազերով կնոջ հետ: Այդ ընտանիքում ծնվեց երկնագույն աչքերով, արյան առաջին խմբով, ուղիղ մազերով երեխա: Նշված հատկանիշները պայմանավորող գեները շղթայակցված չեն և ալիքածև մազերը ստացվում են որպես միջամկյալ հատկանիշ, եթե ծնողներից մեկն ունի գանգուր մազեր, մյուսը՝ ուղիղ:

61

Գտնել գանգուր մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

62

Որոշել այդ ընտանիքում շագանակագույն աչքերով, արյան երկրորդ խմբով և ալիքածև մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):  
Պատասխանը քազմապատկել 100-ով:

63

Ընդամենը քանի՞ տեսակի գենոտիպով երեխաներ կարող են ծնվել տվյալ ընտանիքում, եթե նշված հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարրեր գույցերում:

- (64-66) Օրվա ընթացքում մարդն արթուն է եղել 15 ժամ, ծանր ֆիզիկական աշխատանք է կատարել 5 ժամ: Աշխատանքի ժամանակ մարդու սրտի կծկումների հաճախականությունն ավելանում է 2 անգամ, իսկ յուրաքանչյուր կծկման ժամանակ փորոքից արտամղվող արյան ծավալը՝ 1,5 անգամ, շնչառական շարժումներն արագանում են 2 անգամ, յուրացվող թթվածնի ծավալն աճում է 25%-ով, իսկ շնչառական օդի ծավալը՝ 1,6 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մեկ րոպեի ընթացքում սիրտը կծկվում է 70 անգամ, և յուրաքանչյուր կծկման ժամանակ փորոքից արտամղվում է 70 մլ արյուն, արթուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում՝ 1 րոպեում:

64

Քանի՞ լիսր արյուն է արտամղվել առրտա արթուն ժամանակ:

65

Քանի՞ լիսր թթվածին է յուրացվել օրգանիզմում մեկ օրվա ընթացքում:

66

Քանի՞ լիսր թթվածին է ստացել գլխուղեղը 5 ժամ տևողությամբ աշխատանքի ընթացքում: Ընդունել, որ գլխուղեղի է հասնում առրտա մղված արյան ծավալի 20%-ը:

67

Գյուկողի ճեղքման պրոցեսում օրգանիզմում օգտագործվել է 96 մոլ O<sub>2</sub>, և առաջացել՝ 720 մոլ H<sub>2</sub>O: Հաշվի առնել, որ թթվածնային ճեղքման փուլում 1 մոլեկուլ գյուկողից սինթեզվում է 36 մոլեկուլ ԱԵՖ, իսկ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կԶոռուլ/մոլ էներգիա: Քանի՞ կԶոռու օգտակար էներգիա է առաջացել ԱԵՖ-ի ձևով այդ ընթացքում.

68

ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածի երկարությունը  $1,87 \cdot 10^{-6}$  մետր է: Ա+Թ / Գ+Ց քանակական հարաբերությունը հավասար է 1,75-ի, իսկ մեկ նուկլեոտիդի երկարությունը 0,34 նանոմետր է: Հաշվել ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում ԴՆԹ-ի երկու շղթաների ազոտային հիմքերի միջև առաջացող ջրածնային կապերի թիվը:

**69**

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. մեյողի առաջին բաժանման արդյունքում առաջանում են 2n4c հավաքակազմով առաջին կարգի սպերմատոցիտներ
2. քրոմոսոմների թվի կիսով չափ պակասելը տեղի է ունենում սեռական բջիջների հասունացման ընթացքում
3. մեյողի կենսաբանական նշանակությունը կայանում է նրանում, որ դուստր բջիջները ստանում են նույն քրոմոսոմային հավաքակազմը, ինչ ունի մայրական բջիջը
4. մեյողի առաջին բաժանման անաֆազում բջջի բևեռներ են գնում ամբողջ քրոմոսոմներ, որոնցից յուրաքանչյուրը կազմված է երկու քրոմատիդից
5. մեյողի արդյունքում մեկ դիպլոիդ հավաքակազմով բջիջից առաջանում են չորս հապլոիդ հավաքակազմով բջիջներ
6. մեյողը տեղի է ունենում սեռական բջիջների աճման գոտում

**70**

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. ողնաշարի ողերի մարմինների միջև շարժուն միացումներ են
2. կոնքոսկրերը և կողոսկրերը ձևավորում են անշարժ միացումներ
3. մարդու առանցքային կմախքն են կազմում գանգը և իրանի կմախքը
4. ոսկրերի աճը հաստությամբ տեղի է ունենում շրջոսկրի (վերնոսկրի) ներքին շերտի բջիջերի բաժանման միջոցով
5. գանգում կան երկու շարժուն ոսկրորներ և երկու շարժուն միացումներ
6. միջաձիգ-զոլավոր մկանային հյուսվածքը կազմված է մանր, իլիկաձև, միակորիգ բջիջներից